



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյուր խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Маска».
Կամ Tiflis, Rédaction «Maschak».
Տ է լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաջօրեայ).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խառնաձեւեր առաւօտեան 10 կոպեկ.
Տ է լ է Ք Օ Ն № 253.

ՎԱՐՎԱՐԱ ՎԱՍԻԼԵՎՆԱ, ՎԱՍԻԼԻ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՔԱՄԱՐՇԵՆՆԵՐԸ և ԻՇ-
ԽԱՆՈՒՅԻ ԵԿԱՏԵՐԻՆԱ ՄԻԽԱՅԼՈՎՆԱ ԷՐԻՍՏՈՎԱ խորին կերպով զգացված այն
համակրութիւնից, որ իրանց կրած վշտի առիթով արտայայտեցին իրանց, եւ հնարա-
ւորութիւն չունենալով բոլորին էլ անձամբ չնորհալուծելու յայտնելու, խնդրում են
ընդունել իրանց անկեղծ երախտագրութիւնը:
1—1

Դրիգոր Եսայան, Նիկոլայ Անդրեասեան, Մարիամ և Հեղինէ Դանիէլեան-
ները, Նատալիա Զուրաբեանց, Մարգարիտ և Քրիստափոր Կարապետեանց, Գառ-
արի յայտնում են իրանց ազգականներին եւ ծանօթներին, առաջինները՝ իրանց օրերի
օրդի, միւսները՝ իրանց եղբոր:

ՄԻՔԱՅԵԼ ԴԱՆԻԵԼԵԱՆՆԵՐ

մահվան մասին, որը տեղի է ունեցել Բագուում Հոգեհանգիստ կատարվելու է կիրա-
կի, դեկտեմբերի 2-ին, Զիգրաչին ս. Աւետեաց եկեղեցում, առաւօտեան ժամը 11-ին:
2—2

ԲԱՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ամեն ջանք գործ դնելով.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Հայոց եկեղեցու ոգին. Յարու-
թիւն Արաբեանի կողմը. Նաժակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹ-
ԻՒՆ. Կիւրիկայի կաթողիկոսական ընտրու-
թիւնը. Նաժակ Ամբիկայից. Արաբեան լու-
րեր.—ՀԵՌԱՅԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նաժակներ Թուրքե-
ստանից:

ԱՄԵՆ ԶԱՆԻ ԴՈՐՈՒ ԴՆԵԼՈՎ

Մեր երկրում ներկայումս արված են մի
քանի աչքի ընկնող կատարելագործու-
թիւններ: Նորերս փակված ցուցահանդէ-
սում մենք առիթ ունեցանք տեսնելու
նուրբ գործուածքներ, գեղեցիկ կեր-
տուածքներ և գործարանական ու կիսա-
գործ այնպիսի արդիւնքներ, որոնք կարող
են փոխարինել ուրիշ տեղերից մեր երկի-
րը բերող առարկաներին:
Սակայն պէտք է խոստովանել, որ այդ
կատարելագործութիւնները դեռ շատ չեն
և մուտք չեն գործել մեր երկրի զանազան
անկիւնները, այլ մեծ մասամբ կենտրո-
նացած են մի քանի քաղաքների շուրջը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹՈՒՐԿԵՍՏԱՆԻՑ

«Շահ-Ջըհանը» նայելուց յետոյ, մենք ուզ-
եցինք մեր քայլիչը դնել Լանգ-Թէմուրի
գերեզմանը: Այս գերեզմանը կոչվում է «Գուր-
էմի», այսինքն «Երիտդի գերեզման»: Մօլա-
ները հաւատացնում են, որ այս դամբարանը
կառուցել է ինքը՝ Լանգ-Թէմուրը: Թէպէտ
չինութիւնը արդէն բաւականաչափ քայքայվել
է, բայց նրա գեղեցկութիւնը դժուար է նկա-
րագրել. միայն տեսնողը կարող է գաղափար
կազմել նրա մասին:

Դամբարանի կենտրոնում բարձրանում է
զարդարված, ներկված եւ ցուլն աղւանդով
հոյակապ ու սքանչելի գմբէթը, որի արտաքին
մասի զարդարանքը համարեա ոչնչացել է: Շի-
նութեան ներքի մասը ունի երկու բաժան-
մունք—վերեւի և ներքեւի: Վերեւի միջին
սենեակում գրված են ինն զանազան մեծու-
թեան քարեր, որոնցից ամենամեծը եւ լայն-
ված են Լանգ-Թէմուրի եւ իր ծոռիկ ազգա-
կանների մարմինները: Այստեղ վերեւի քարե-
րին համապատասխան գրված են նոյնպէս ինն
քարեր:

Մզկիթներին իր աւանդութիւններով ամե-
նահետաքրքրական է «Բիբի-Պանուշ» մզկի-
թը, որը, ինչպէս ասացին, Լանգ-Թէմուրն է
կառուցել ի պատիւ իր սիրելի կնոջ՝ Սարայ-
Միւլը խանումի: Այս մզկիթը, ինչպէս երե-
ւում է, մի ժամանակ չափազանց գեղեցիկ էր,
բայց այժմ քանդված եւ բոլորովին անուշա-
գիր թողած լինելով, ընչ-քիչ քայքայված է,
եւ գուցէ շատ չուով թողնուով կը փչի:
այն ինչ մի ժամանակ ունեցել է առաջին՝ 44

Նշած կատարելագործութիւնները ցոյց
են տալիս, որ մեր երկիրը ընդունակ է
արդիւնաբերելու այն առարկաները, որ
մենք մինչև այժմ բերում էինք ուրիշ տե-
ղերից և որոնցով մենք կարող կը լինէինք
մեր երկրի ազգաբնակչութեան ձեռքը տալ
աշխատանքի և շահի նոր միջոցներ:

Այդ կարելի է Սակայն ո՞վ պէտք է
տարածէ եղած կատարելագործութիւննե-
րը մեր երկրի զանազան անկիւններում և
ինչ միջոցներով պէտք է խրատուել և
զարգացնել նախաձեռնութեան ոգին, որ-
պէս զի երևան զան կատարելագործու-
թիւններ և այն ձիւղերում, ուր ներկա-
յումս շարունակվում է հին արհեստը իր
նահապետական գրութեամբ:

Իսկ կարևոր հարց է: Եթէ արհեստա-
նոցները և գործարանային դպրոցները օգ-
նում են այդ հարցի լուծման, պէտք է
այդ հիմնարկութիւնների թիւը աւելաց-
նել և նրանց գործունէութիւնը ապահո-
վել: Եթէ մասնաւոր նախաձեռնողների
օրինակը խրատուող նշանակութիւն ունի
և ուսանելի է, պէտք է այդ նախաձեռ-
նողներին քաջալերել և օգնել: Եթէ հա-
ղորդակցութեան ծանապարհների բար-
ւոգումը նպաստաւոր է արդիւնաբերած

տարին, այսինքն, միանգամայն 807 թ. եւ
կամ 1429 թ.:

Այս նեֆրիտի ձեղքվելու մասին կայ երկու
աւանդութիւն: Առաջինը՝ քարի ձեղքվելը վե-
րագրում է աւագաններին, որոնք կարծելով,
որ քարի մէջ ոտիկ է պահված, փորձում են
գողանալ եւ այդպիսով կտրում են. իսկ ե.կ-
րորդ աւանդութիւնը այդ վերագրում է պար-
սից Նադիր-Շահին, որը ցանկանալով տեսնել
քարը, հրամայել է քարը բերել տալ իր մօտ.
եւ նրա ուղարկված մարդիկը կտրել են քարը:

Յայտնի պրոֆէսոր Մուշկէտովի կարծիքով
այդ քարը բերված է Կիւէն-Լուս տարերից եւ
իր մեծութիւնով միակն է: Դամբարանի ձե-
ղունը մավրիտանեան ալապատերից է, իսկ
յատակը մարմարեայ սալաքարերից: Եօթը
մարմարեայ սանդուղքներով իջնում ենք ներ-
քեւի բաժանմունքը, ուր իսկապէս ամփոփ-
ված են Լանգ-Թէմուրի եւ իր ծոռիկ ազգա-
կանների մարմինները: Այստեղ վերեւի քարե-
րին համապատասխան գրված են նոյնպէս ինն
քարեր:

Մզկիթներին իր աւանդութիւններով ամե-
նահետաքրքրական է «Բիբի-Պանուշ» մզկի-
թը, որը, ինչպէս ասացին, Լանգ-Թէմուրն է
կառուցել ի պատիւ իր սիրելի կնոջ՝ Սարայ-
Միւլը խանումի: Այս մզկիթը, ինչպէս երե-
ւում է, մի ժամանակ չափազանց գեղեցիկ էր,
բայց այժմ քանդված եւ բոլորովին անուշա-
գիր թողած լինելով, ընչ-քիչ քայքայված է,
եւ գուցէ շատ չուով թողնուով կը փչի:
այն ինչ մի ժամանակ ունեցել է առաջին՝ 44

առարկաների էժան և յարմար տեղափո-
խութեան համար, պէտք է շարունակել
գործել այդ ուղղութեամբ: Եթէ կառա-
վարութեան նպատակները և պաշտպանու-
թիւնը կարող են օգնել տեղական գործող-
ներին, պէտք է աշխատել, որ այդ պաշա-
պանութիւնը լինի սիստեմական և լայն
ծաւարդ:

Պէտք է բոլոր միջոցներն էլ գործ-
դնել, որպէս զի նրանց համագործակող
գորաւոր զարկ ստանալ մեր երկրի գե-
թմարած և քնած արդիւնաբերութիւնը և
կարողանալ հանդէս գալ իր բոլոր ոյժով
և ճոխութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՂԻՆ

Բաղէշից գրում են «Արեւելքին».
«Անսովոր ամուսնութիւն մը տեղի ունեցաւ
քաղաքիս մէջ, անսովոր պատկազրութեամբ,
պարագայ մը որ կուգայ չնչուի հայ եկեղեցին
անխորական ոգին եւ անոր սպասաւորող եկե-
ղեցականին լուսամիտ ձգտումները: Տեղւոյս
քովհետեւներէն Սոկրատ էֆ.՝ ազգաւ յոյ՝ ա-
մուսնացաւ քաղաքական ազգայիններէն աթթ.
Սեդայի աղջկան հետ, հայ եկեղեցին մէջ: Պատ-
կազիրն էր առաջնորդական փոխանորդ Պետրոս
վարդապետ: Չենք կարծիք որ այս անսովոր
պտակադրութեան վրա գտնուին զայնթաղող-
ներ՝ խաւարածիւն հայեցողներով. եթէ գրա-
նուին իսկ, թող մտաբերեն վերը յիշեալ այն
է մեր ուղղափառ եկեղեցիին անխորական
նութիւնը եւ քրիստոնէական համբարշխու-
թեան ու համահաւասարութեան դաւանանքը:
Նոյն լրագիրը հաղորդում է: «Միացեալ Նա-
հանգաց Բրոյդիտէն քաղաքին հայ եկեղեցին մէջ
հոգեհանգիստ կատարուեց է հանգուցեալ Մաթ-
թիւի նախագահին հոգւոյս համար: Փարոքիչ
Արաէն վարդապետ գրուածականը բերեւ է պ.
Մաթ Գրիգորի, Նաեւ ցաւակցական հետագիւր մը
ուղղել է տիկին Մաթ Գրիգորի Տեղւոյս հայերը
300 տուրք հանգանակելով իրենց մէջ, խոշոր
ծաղկեպսակ մը դրեւ են նախագահին դադա-
ղին վրա: Ուրիշ քանի մը եկեղեցիներու մէջ
ալ հոգեհանգիստ կատարուեւ է»:

Իսկոյն երեւում է, որ ոչ Բաղէշում, ոչ
Ամերիկայում չը կան գերմանական դիպլոմա-
նով զարդարված էջմիածնական աստուածա-
ստեղծ երկրորդութեամբ եւ 35 օստէն լայնու-
թեամբ մի բալի, որը ամբողջովին առայա-
տակված էր մարմարեայ քարերով:
Արեւելեան պատմաբանները ասում են, որ
մզկիթի շինութեան վրա բանել են Հնդկաս-
տանից. Պարսկաստանից եւ Հայաստանից բեր-
ված 200 քարտաշներ եւ 500 բանուորներ,
որոնք տալիս եւ փորագրել են սարերից փղե-
րի վրա բերված քարերը: Շինելու ժամանակ
հսկողութիւնը յանձնված էր Թէմուրի մօտիկ
ազգական խանզադէներին. իսկ ինքը ամեն մի
յարմար միջոցին գալիս էր նայելու եւ փու-
թացնելու շինութիւնը:

Անա այս մզկիթի հետ կապված է մի գեղե-
ցիկ աւանդութիւն, որի մասին միւս անգամ:
Բիբի-Պանուշը Թէմուրի վերջին տարիների
ամենապիւրի կինն էր. նա չինական կայսրի
դուստրն էր: Թէմուրը նրան շատ էր սիրում,
գրեթէ պաշտում էր նրան նրա խելքի եւ
գեղեցկութեան համար: Մի օր մի գէրվիչ
գուշակում է թէ՛ Բիբի-Պանուշը պէտք է մեռ-
նի կարծիք խախտելուց: Բիբի-Պանուշը խնդ-
րում է իր ամուսնուն՝ Թաղի նրան ոչ թէ հո-
գել մէջ, ինչպէս ընդունված է, այլ և ողորդ
դուրս, առանձին զաւթող մէջ: Եւ հան հոգի
ամուսնին, որպէս զի կատարած լինի իր սի-
րելի ամուսնու խնդիրը, կատուցանում է յի-
շեալ մզկիթը, որի տակին շինվում է առան-
ձին տեղ զաւթող համար, իսկ բակում մի
փառաւոր մեղրէտէ: Թէմուրի արդէն ծերացած
ժամանակն էր այդ: Մի օր, երբ Բիբի-Պանու-
շը համարեա պատրաստ չինութիւնը այցե-

ւաններ: Այդ իսկ պատճառով էլ հայ եկեղեցին
այդ տեղերում ցոյց է տալիս թէ որքան լայն
ու համբերող ոգի ունի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԵԱՆԻ ԿՏԱԿԸ

(Նաժակ Արմանակից)

1874 թ.ին Ղրիմի Արմանակ քաղաքում
մեռաւ Նոր-Նախիջևանի քաղաքացի, Պերե-
կոպեան երկրորդ գիլդիայի վաճառական յայտ-
նի հարուստ եւ բարերար Յարութիւն Աւետի-
սեան Արաբեանը, թողնելով մի ընդարձակ կը-
տակ եւ մի անգին գումար փող:

Բաւական հետաքրքրական եւ բնորոշ է այս
կտակը, մասնաւոր ինքի աչքի առաջ ունե-
նանք, որ հիմնաւոր կարծիք կայ, թէ դրա
թելադրողը եղել է Գաբրիէլ արքեպիսկոպոս
Այվազովին. ապա թող ներքի մեզ առաջ
բերել այդ կտակի համառոտ բովանդակութիւնը,
քաղված ռուսերէն թարգմանված եւ բաղմա-
թիւ օրինակներով տպագրված ռուսերէն մի
օրինակից:

1870 թ.ի ապրիլի 24-ին Արմանակում է
գրված կտակը, որով թողնվում է ժող 80,000
ր. փող, այդ գումարը կտակողի նշանակած
հինգ հոգաբարձուները պէտք է տոկոսով առ-
յին եւ օտարված տոկոսի կէտք յանձնէին կնո-
ջը, իբրեւ ապրուստի միջոց, իսկ միւս կէտք
միացնէին մայր գումարին՝ այսպէս տարեցտա-
րի մինչեւ կնոջը մահը, երբ բոլոր փողերը
պէտք է բարդ տոկոսով անձին ռուսաց պե-
տական գրաստանը 33 տարի շարունակ, հաշ-
ւելով կնոջ Գայանէի մահվան օրից:

Այս նշանակված ժամանակամիջոցը անցնե-
լուց յետոյ պէտք է մի ռուսաւարան քաղվի
Արմանակ քաղաքում կտակողի սեփական շի-
նութեան մէջ եւ կոչվի «Արաբեան ռուսաւարա-
նոյն». առ գտնվելու է թեմական առաջնորդի
անմիջական հսկողութեան տակ: Սովորելու են
25 ձրիավարք եւ 25 թոյակաւոր աշակերտ-
ներ: Յօդուա ռուսաւարանին նա թողնում է
նաեւ մի գրասենեակ եւ մի կրպակ:

Գումարից ստացված տոկոսից տարեկան
2200 ռուբլի յատկացվելու է դպրոցին: Բացի
սրանից կտակողը այլ եւս մի քանի աննշան
կէտեր էլ է յիշատակում: Այսպէս պարտաւորեց-
նելով զենի ի սեփականութիւն եկեղեցու օրան
կից բակը հիւսիսային կողմից՝ վերջացնում է
կտակը իր եւ վկաների ստորագրութեամբ:
Ինչպէս յիշեցինք, կտակողը մեռաւ 1874

լիւն էր դուրս եկել, նա տեսաւ ինչպէս մի
թունաւոր օձ դերեզմանից դուրս սողաց ու
պտակեց արեւի առաջ տաքանալու համար:

Թագուհուն չրջապատողները ուղեցին սպա-
նել օձին. բայց Բիբի-Պանուշը փայփայեց սո-
ղունին եւ կերակրեց:

Մեռաւ Բիբի-խանուշը, դրվեց մարմարեայ
դազաղի մէջ եւ թաղվեց իր համար պատրաստ-
ված գերեզմանում:

Թագուհու բոլոր ունեցած գանձը, Թանկա-
գին զարդերը նրա հետ դրվեցին զաւթուած
Գիշերը գողերը գալով բաց են անում գերեզ-
մանը մեռելին թալանելու նպատակով. բայց
երախտապարտ օձը դուրս է սողում իր բնից
եւ հարուածելով թունաւորում է գողերին, այն-
պէս որ, միւս օր առաւօտեան նրանց գտնում
են սպանված եւ հարստութիւնը ցրել ու ցան:
Այս գէպից յետոյ ոչ ոք չէ վառահանում նո-
րից տեղաւորել իրեղէնները. եւ վերջապէս,
երբ մի ծերունի համարձակվեց ամենի ներս,
դուրս նրա ետեւից փակվեց յաւիտեան:

Մինչեւ այժմ էլ օտարները մէջ կայ այն
աւանդութիւնը, որ օձը պահպանում է իր ա-
զատողի գերեզմանը. թէպէտ յայտնի է եւ
այն, որ առաւելեւ արիւնքաւորութեան ժամա-
նակ այդ գերեզմանը բացել են եւ թէպէտ մի
քանի քարեր կային մէջը, բայց նրանց ոչ մի
գիրք Բիբի-Պանուշի յիշատակը չունէր:

Այս աւանդութեան մէջ հետաքրքրական
այն է, որ օձը ներկայանում է երախտագէտ,
այն ինչ մենք երեւութիւնից օտարել ենք
լուր, որ օձը սպերախտ է: Մինչեւ անպաւ

Թ.ին, թողնելով մի կտակ, որի իրազեկումը պէտք է հետեւէր իր կնոջ մահվանից 33 տարի յետոյ։ Այս անթորոշող կարգադրութեան պատճառը իրանք օրացի սրբիները բացատրում են այն անբաւականութիւնով, որը ծագել է կտակողի եւ իր համաքաղաքացիների մէջ։ Բայց մի եւ նոյն ժամանակ աւելացնում են, որ եթէ Արարեան կարողանար նախատեսել, թէ կինը կը մեռնի իր մահվանից ամբողջ 21 տարի յետոյ, այդ պայմանով կտակ երբեք չէր տնի։ Պէտք է ասել, որ Գայանէ Արարեան եղել է ի բնէ հիւանդոտ։ Նա մեռաւ 1895 թ.ի մայիսի 19-ին։

Հինգ հոգաբարձուների լիազոր Յ. Մ. Սէ-ֆերեանց, հէնց որ լրանում էր պարտաւոր-հանկերի ժամանակը, հաւաքում էր Արարեանի գումարին պատկանելի պարտքերը։ Բայց 1896 թ.ին մեռաւ Սէֆերեանց եւ նրա տեղ լիազոր նշանակվել էր Կարապետ Ե. Բայան, որը հաւաքելով բոլոր պարտքերը, հաւաքած 82,400 ռուբլին տասը տարով եւ 1/2%-ով յանձնեց պետական բանկի Սեֆտաուպոլեան բաժան-մունքին 1899 թ. № 2311 (хитера II.) վկա-յականով, բայց ոչ բարդ տոկոսով, որովհետեւ այս արգելված է կանոնադրութեամբ, այլ ա-մեն մի կրեմատիկին պէտք է օտարովի այդ գումարի (82,400 ռուբլու) տոկոսները եւ դարձնել անորոշ ժամանակով աւանդ նոյն բաժանմունքի № 4120 գրքովով։ ապա տասը տարուց յետոյ այդ տոկոսները կտրելի կը լինի միայնակ մայր գումարին եւ նորից տալ տաս տարվայ ժամանակով եւ այսպէս մինչեւ 1928 թ.ի մայիսի 19-ը, այսինքն երբ կը լրանայ կտակողի նշանակած 33-ամեայ միջոցը եւ կա-րելի կը լինի իրազեկել Արարեանի կտակը։

Կտակողի ցանկութեան համաձայն հոգա-բարձուների լիազոր 1899 թ.ի օգոստոսի 19-ին տեղեկութիւն է տուել էլիմիանի սի-նոդին, թէ բոլոր փողերը արդէն հաւաքված են եւ տեղաւորված պետական բանկում։

Մինչեւ 1900 թ. յունիսի 28-ը օտարովի է մի տարվայ տոկոսը 2739 ռ. 65 կ., որ եւ 10%-ով արված է պետական բանկը անորոշ ժամանա-կով աւանդ։

Ներկայումս Արարեան կտակի հոգաբար-ձուներն են՝ տեղիս քահանայ Օղտ. Հայրունի, Պէրէկոպեան վաճառականներ՝ Գրիգոր Գաւ-րիէլեան-Ալիսանկի եւ Սերբ Գրիգորեանի ինքնա-նկալ, Պէրէկոպեան մէշչանի Յովնէի Բարեկեան Գաւախեան եւ Կարապետ Սիլա-յան Բայան (լիազոր)։

Վ. Պապիկեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Մօակվա, նոյեմբերի 24-ին

«Մշակ» № 255-ի ներքին տեսութեան մէջ, «Վերադարձ դէպի միջին դարեր» խորագրից կրող յօդուածում, որտեղ խօսվում է հ. Ղ. Ալիշանի մահվան առիթով կատարվելիք հոգե-հանգստի մասին մի այսպիսի հարց կայ արված. «մենք չը գիտենք՝ հայ հոգեւորականութիւնն էլ համարում է արեւմտեանի հետ, թէ չէ»։

Լինելով այդ հոգեւորականութեան մի նուառ

անդամը՝ ես կազմել եմ պատասխանը տալ այդ հարցին։ Հոգեհանգստի պատասխանը կատարել նշանակում է՝ տաճարական աղօթքներով, շա-րականներով, երգերով ու աւետարանով մի աղայտոնական խնդրումը ուղղել «խաղաղու-թեան թագաւոր» Յիսուսին, որպէս զի խաղա-ղութեամբ հանգստացնել վախճանված հայի հոգի, իր արքայութեան մէջ, իր «անձառ խոտածանց» համաձայն։ Հոգեհանգստի ու թաղման կարգի միակ նպատակն ու էությունը այն է։ Ս. մի այսպիսի սուրբ պարտականութիւն կատարե-լուց ճիշտապէսական եկեղեցին, ինչ ազգի ու դաւանութեան էլ պատկանելի լինի նա՝ չը պէտք է հրաժարելի, քանի որ նա չայն ու մար-դասէր սկզբունքների վրա է հիմնված, եւ նրա հիմնադիրն իսկ Աւետուած՝ օրէն էր։

Գալով մասնակի հայաց եկեղեցուն, նրա ինկիլի կայրապետները այդ բարձր սկզբունք-ները մեզից աւելի լայն մտքով են հասկացել ու օրացադրել, ուստի եւ ոչ-լուսաւորչականի հոգեհանգստի նկատմամբ, ըստ իս, ոչինչ ար-գելք չը պէտք է լինի մեր հոգեւորականու-թեան կողմից։ Աւելին կասեմ։ Դատելով զուտ ջրի տունն է աւարձ՝ այդպիսի մի պայտանու-կան խնդրումը չէ կարելի չանել եւ այն դէպքում, երբ վախճանված մինչեւ անգամ մեր եկեղեցու հակառակորդն ու բացարձակ թշնամին է եղած։

Մեր եկեղեցու օգին ազատ է ու վեհ։ Նրան չէ կարելի ու չը պէտք է նեղ չըջանալի մէջ սեղմել, կաշկանդել։ Մեր եկեղեցին չէ միթէ, որ համարենք ամեն օր իր լայնահայեաց ու երկայնամիտ օտարակազմ-վարդապետի բերանով խնդրում է։ «Յիսուս, Տէր, զպաշտօնեայ քո... զխարաւս, զբարեբանս, զճնամար, զտանկիս»։ Նոյն եկեղեցին չէ, որ չարեանակ ու վեհանձ-նաբար միջնորդում է՝ «Վասն խաղաղութեան աւանայն աշխարհի» եւ այլն։ Հետեւապէս, իմ խնամք կարծեմք միջ-լուսաւորչական հայի, նոյն իսկ եւ ոչ օր եւ է տարագրւան ու տա-րակազմ ճիշտապէս հոգու հանգստութեան համար՝ արգելք չը պէտք է լինի մեր եկեղեցու կողմից։

Գալով հայից աւելի հայ եղած՝ եւ իր հա-յաթիւթեամբ Միսթարեան միաբանութեան մէջ գտնարի պէս փայլող մեծ վարդապետ հ. Ղ. Ալիշանին, որ իր խելքի, մտքի ու մեքե-նայացած սուրբ մասնների բոլոր թափով իր ողջ կեանքը հայութեան օգտին է ծառայեցրել՝ նրա հոգեհանգստի մասին երկմտելու մէջ ան-գամ ոչ միայն դաւանաբանական, այլ եւ քրի-ստէական հիշել չը կայ։

Բաւական է միայն ինչը այդ մեծ գոր-ծիչի, այդ՝ հայոց աշխարհի սոխակի հետե-ւեալ խօսքերը. «Եւնեցէք, հոգիք Գրիգոր-եանց, Ներսիսեանց, Սահակեանց, Մովսի-սեանց, Ղեւոնդեանց, Վարդանանց... սուրբ թա-գաւորք, հայրապետք, վարդէք եւ վարդապետք հայոց, չնչնցք յերկրից յերկրի, Խանութի ձեր երկնաւոր շունչն յերկրաւոր շունչն Հայկական, որ երբ հասնի աւանդելու իր վերջին շունչն ալ՝ հաւաքաբազմ խառնվի չեքիններուն հետ»։

Իսկական հայութեան անուանական հայու-թիւնից տարբերելու կարողութիւնից բոլոր-վին զուրկ պէտք է լինի մի եկեղեցի, որ կա-րողանայ Ալիշանի նման մի հոգի գործիչի յի-շատական առաջ փակել իր բերանը՝ միմիայն այն խորական տաճարաւորութեամբ, թէ ինչու նա գործում էր Միսթարեանի եւ ոչ էլ միտնական միաբանութեան միջեւ։

Էմմանուէլ քահ. Նազարեան

են տուել։—Նա միայն աշխարհ քանդող աւե-րոյ չէր, այլ ինչոք եւ ծաղկեցնող էր։ Եւ ի-րաւ, այն մարդը, որ ամենատաճախար կեր-պով հրամայում է Հնդկաստանում հարիւր հազար ժողով կոտորել, կամ երկուքէ վախճակի մէջ ման է ամենում իր հզոր թշնամուն, արտայայտում է մի բարբարոսի համար դժուար երեւանային ճշգրտ սէր՝ դէպի կինը, զուլա է ինչեցնում զիստականների, հմուտ ճարտա-րապետների, աստուածաբանների առաջ, օտեղ-ծում է ճնամարտներ, անկեղծողներ, մղկիթ-ներ, ամենայն զգուշութեամբ ջորիների վրա բարձեւով բերել է առիթ իր սիրած մայրա-քաղաքը Բոստանի թիւնազգին գրադարանը։ Ամեն մի նուաճած երկրում նրա առանձին հովանաւորութեան տակ էին մտնում այդ երկրի գիտնականները։ Նա փափայում էր նրանց, գրաւում իր կողմը սիրալիք վերաբե-րումներով եւ մեծամեծ պարգևներով։ Թէ՛մուրը չափազանց հիւրասէր էր, այդ երեւում է նրա բազմաթիւ ու չեղող խնդրանքներից, որ ասը-լում էր թէ ի պատիւ ժողովրդի եւ թէ չըը-լապատող իր գիտնական հիւրերի Բաւական է ասել, որ այսպիսի հիւրասիրութիւնների ժամանակ մինչեւ 15 հազար վրաններ էին դրված լինում Ձերաւաջի գետի հովտում։ Ինքը թաւ-դազին չորերով, գլխին սեպածեւ գլխարկ, օրի-գազաթիւն թաւազգին յալինթ՝ չըլում էր հիւ-րերի մէջ եւ հիւրասիրում։

Իսկ շատ անգամ նա սիրում էր վէճի բռն-վել գիտնականների հետ եւ այն մարդը, որ

ՆԵՐՓԻՆ ԱՌԻՐԻՐ

Այսօր, շաբաթ, զեկեմբերի 1-ին, Թիֆլիսի հասարակութեան ծանօթ նոր սկսող երգչուհի, որ ծանկիւն է Անահիտ անուն տակ, հան-դէս կը գայ «Պետուտ» օպերայում Զիբելի դերում։

Պետերբուրգում կազմվել է արեւելութեան դէմ մարտնչող կանանց մի ընկերութիւն։ Ո-գետրված իրանց զաղափարով, Պետերբուրգի կանայք մտադիր են կոիւ մղել այդ ախտի դէմ ամենատեսչուն միջոցներով։ Ի միջի այլ զանազան միջոցների արեւելութեան դէմ, նը-րանք որոշել են բոլորովին զաղափարել ծա-նօթութիւնը աշխատարկանց հետ, որոնք վարակված են այդ ախտով։

«Приазов. Край» լրագրին հետագում են Պետերբուրգի «Նաւթարդիւնագործների միջ-նորդութիւնը» նաւթի պուլաւիւմը բաժնեկիւ-նով փոխարինելու մասին, մերժված է կառա-վարութիւնից։

Գերասիմ Բոբրով Ադրիէյա ցոյց տուեց իր առաջանք մի նոր դերում, որտեղ պահանջվում էր երգելու ընդունակութիւն եւ ծածածած լեզուով խօսակցութիւն։ Նա կատարեց Գէի «Казань» (Պատիժ) պիեսում սպանիացի Գոդ-դայի դերը։ Առաջին եւ վերջին գործողութեան մէջ Ադրիէյա երգեց թիւեւ օպերետային եր-գեր, որոնք մեծ հաւանութիւն գտան եւ կրկն-վեցին։ Ադրիէյա երգում է ճաշկոյտ եւ զգա-յունքով։ Նա խօսակցութիւնը, որ ներկա-յացնում էր Գրանսերէնի եւ ռուսերէնի խառ-նուրդ, ոչ միայն չէր խանգարում նրա հոգու շարժումները արտայայտելու, այլ եւ առիթ էր նրանց մի առանձին զգես է ոյծ։ Կետայի գերը կատարեց Բրիչինսկայա, որին աջողկեց միայնակ կաֆեշյանտանային երգչուհու տիպը սիրող եւ անկեղծ հոգու տիպի հետ։ Պետիպա-Վիկինայի դերում աւելց ամբողջացրած տիպ ընտրող անսամբլը բաւարար էր Թատրոնը լիքն էր հանդիսականներով։

1902 թ.ի յունվարի 15-ին, ինչպէս յայտնի է, օրինական ոյծ է ստանում կովկասեան բարձրագոյն իշխանութիւն պարտադիր որո-շումը Թիֆլիսի մէջ դրամպանների դատակարգ մտնելու մասին։ Դրամպանների հարցի լուծ-ման հետ միասին, —ասում է «Тиф. Известк» լրագիրը, —սկզբունքով վճռվում է նաեւ Թիֆ-լիսում հասցէների տուն հիմնելու հարցը, ո-րովհետեւ դրամպանների վերաբերեալ կա-նոններով պարտաւորութիւն է արվում բոլոր տանուտէրերի եւ նրանց կառավարիչների վրա իրաւաւորութիւն օր հաղորդել անդական օտար-կանական վարչութիւններին տեղեկութիւններ իրանց աներում ինչեւանդներին եւ գնացողնե-րի մասին մի օրվայ ժամանակամիջոցում։ Թէ-ում իրաւաստութեան տակ կը գտնվի հասցէ-ների տունը, —աս այժմ յայտնի չէ եւ նրա

աւելի կտրուկ կերպով էր պատասխանում, ա-ւելի մեծ պարգեւ էր ստանում։

Որքան հայերն էր Լէնկ-Թէմուրը, ցոյց է տալիս հետեւեալ դէպքը։ Երբ մի անգամ նա բաղանիքում էր իր մշտական եւ օրինի ընկերների հետ, հարցնում է բանաստեղծ Աւ-մէշ-Քերեմաթից, «Ինչ քին կը տալիք, դու Աւմէշ, եթէ եւ ծախուք լինէիս»։ Ոչ աւե-լի քան քան —քանահիշեց ասպեկեւ—եղաւ Ահ-մէշի պատասխանը։ «Ինչպէս, իմ վրա եղած չափիւր միայն այդքան արժէք, ասում է զոր-մացած Թէմուրը։—Ի հարկէ—պատասխանեց Ահմէշը համարձակ—մտնումս ես միայն քո չափիւր էի գնահատել, իսկ դու ինքն ըստ ինքեան ոչինչ չես արժու»։

Եւ այդ յանդուգն օրախօսութիւնը լուռ-թեամբ տարաւ Ատիյի իշխողը։

Ի պատիւ իր դատարարակ Սէիդ-Բերքէի, որը փառաւոր ապագայ էր գաւազակ նրան, Բէյաթի կատարեց այն դաժմարարութիւն—մովզ-լելը, որի տակ միտաին թաղված են երկուսն էր։ Իսկ երբ նուաճելով Ասիան, Բաղդադի խա-լիֆաթը, Հայաստանն ու Վրաստանը, նա վերադառնում է աւել, նրա առաջին գործը լինում է—գնալ եւ աղօթել հօր գերեզմանի վրա։

Թէ՛մուրի օրով կանայք էլ աւելի ազատ էին զղում իրանց, քան թէ յետոյ, գոնէ նրանց ե-րեսը բաց էր, ինչպէս այժմ զորիւք եւ թուրք-ման կանանցը։

Լէնկ-Թէմուրը մեծ յարգանքով էր վերա-

հիմնարկութեան ժամանակի հարցը ամբողջա-պէս կախված կը լինի զաղաքային դոմայից, որի ընտելութեան կը ներկայացնվի շուտով այդ հարցը։ Որքան յայտնի է այժմ, վարչական մար-մինները մտադրութիւն ունեն հասցէների տան երեւմուտքի կառավարութիւնը յանձնել զաղա-քին, իրանց վերապահելով այդ հիմնարկութեան մէջ ծառայողներ նշանակելու եւ նրանց ար-ձակելու իրաւունքը։ Իսկ եթէ զաղաքը հրա-ժարվի հասցէների տան ֆինանսական մասը կառավարելուց, այդ դէպքում մտադրութիւն կայ հասցէների տան ամբողջ կառավարութիւնը յանձնել Թիֆլիսի օտարկանապետին։ Լուրերին նայելով, տեղական վարչութիւնները արդէ-գրադրութիւն են օկելով Պետերբուրգի հասցէ-ների տան գլխաւոր կառավարչի հետ եւ խընդ-րել են նրան Թիֆլիս ուղարկել այդ տան հաշ-ւարարներից մէկին, որ կարողանար կազմա-կերպել Թիֆլիսում հասցէների տան գործը։

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում կազմվել է մի մասնաւոր ընկերութիւն, որ նպատակ է դրել իրան բոլ-կատի ենթարկել անդրկական ապրանքները։ Նեշկայումս այդ ընկերութեան անդամներն այնքան արգէն բաղմամբ են, որ շատ խա-նութիւններում անդրկական ապրանքների վրա կպցրած էտիկէտները փոխարինվում են ֆը-րանսիական եւ գերմանական էտիկէտներով, որովհետեւ այդ ապրանքները այլապէս չեն ծախվում։

Պետերբուրգի լրագիրները գովառանքով են խօսում օրիորդ Պապայանի երգչուհութեան մասին։ Վարդիկ Ուսիչն ընկերութեան օգտին արված երկույթի ժամանակ։

ԱՍՏՄԱԿԱՆԻՑ մեզ գրում են. «Երէկ, նո-յեմբերի 18-ին, Ե. Աստուածածտ մայր եկե-ղեցում հոգեհանգիստ կատարվեց կոմս Յով-հաննէս Լազարեանի մահվան հարիւրամեակի առիթով։ Ձը նայելով, որ նախնիք կիրակին դրա մասին եկեղեցում մասնաւոր կերպով ծանուցում էր եղել, այնուամենայնիւ աղո-թողների թիւը շատ օգնական փակ էր։ Հոգե-հանգստից առաջ առաջնորդը մի կարճատե, բայց ազգու ընտրող խօսեց բարեգործութեան նշանակութեան մասին առհասարակ եւ մա-նասանք Լազարեանների բարեգործութեան մասին։ Յետոյ զանաւորվ ժողովրդին՝ ոչ-պաշ-տօնական առաջարկութիւն արեց մի օր եւ է քարի գործով անմահացնելու մեծ բարերար Յ. Լազարեանի յիշատակը։ Յոյս կայ, որ Աս-տաբանի ժողովուրդը անտարբեր չի մնայ դէպի այդ առաջարկութիւնը»։

ԵԱՍԱԿԱՆԻՑ մեզ գրում են. «Տեղիս գաղու-թը դիմեց իր հովու զաղթական քահանային, որ հ. Ալիշանի մահվան առիթով հոգեհանգիստ կատարէ։ Բայց նա մեղծեց, պատճառաւնե-լով, որ Թիֆլիսի վարդապետ Գաւրիկ Յով-սէֆեանը հոգեհանգիստ կատարելը արգելել է։ Գաղութիւնը, իշտացած այդ մերժումից, իր ցա-

րելովում դէպի աղգրի առաջնորդի կողմը։

—Երկրի այն կառավարիչը—ասում էր Է-միրը—որին աւելի քիչ են յարգում, քան թէ այն մարակը, որով նա պատճում է, արժա-նի չէ կառավարելու։

Նրա պետական համաւ եւ խորհրդաւոր կինը բաղկացած էր երեք բարեկարգ իրեւ նշան, որ իշխողի երկրները գտնվում են աշ-խարհի երեք մասերում։ Այս երեք բարեկար-չուրը փորագրված էր «Փրկութիւնը ճշմար-տութեան մէջ է» բառերով։ Լէնկ-Թէմուրի կինը ամբողջովին մտնում է այժմեան Սա-մաղաւադի զաղաքային նշանի մէջ։

Նա չէր սիրում նոյնպէս չեղ ու մեծ արա-ղաներ, իսկ հրովարտականները միշտ գրում էր կարճ—Եւ, Աստուծոյ ծառայ, Թէ՛մուրս ա-սում եմ հետեւեալը։

Վերագրեալ տողերը գուցէ խորթ եւ ծանր երեւան հայի համար. մենք սովորել ենք, որ Լէնկ-Թէմուրը աւերող, քանդող, մարդասպան է եւ այլն. նա կատարել, քանդել եւ աւերել է Հայաստանը։ Բայց շատ քիչ աշխարհակա-րներից նա բարձր էր գոնէ նրանով, որ նրա պատերազմների մէջ մի նպատակ կար՝ տիրել ամբողջ աշխարհին եւ այսպիսով իրազեկել այն սկզբունքը. «Եթէ երկնքում մի Աս-տուած է, երկրիս վրա էլ պէտք է մի տէր եւ իշխող լինի»։

Հրեւոսեցի

աւելցուցին յայտնեց Վենետիկի Միտիթա-
րեան միաբանութեանը հետագայով, որի բո-
վանդութիւնն է. Վալապի գաղութը միա-
բանութեանը յայտնուած է իր խորին ցաւակ-
ցութիւնը հ. Արիւնի մահական առթիւնով:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՒԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒ- ԹԻՒՆԸ

Հինգ տարիներէ ի վեր Կիւիկիայի կաթո-
ղիկոսական խնդիրը դարձել էր մի գործնա-
նախադրանք թուրքահայերի համար: Ենթադի-
թուրք կաթոլիկութեան կառավարման եւ ան-
տեղի ունեցողութեանը, նոյն իսկ Օրմանեան
պատերազմէն էլ երկար ժամանակ չէր կարո-
ղանում գտնել մի ելք, որ հաճելի լինէր այդ
կաթոլիկութեան: Այս անգամ հարցը, ինչպէս
երեւում է, բաւարար լուծման է հասնում:
«Արտագին» լրագրի մէջ գտնուած ենք հետեւեալ
մանրամասնութիւնները.

«Առանայէն Սահակ եպիսկոպոսի կողմէ
ա. պատերազմէն ուղղուած հետագիրը մը կը
ծանուցանէր թէ Կիւիկիայի կաթոլիկոսական
ընտրութեան նախապատրաստական գործողու-
թիւնները չաքաթ օրը պիտի սկսէին Առանայի
մայր եկեղեցին մէջ՝ հանդիսաւոր բարեմաղ-
թութիւններով վեհ. սուլթանին համար, նաեւ
աղօթներ պիտի ըլլային, որպէս զի արժանա-
ւոր ընտրութիւն մը կատարուի Կիւիկիայի կա-
թոլիկոսական աթոռին համար: Ս. Պատրիար-
քը այդ հետագիրը, պատճառաւորով մը, անմի-
ջապէս կայսերական պալատ հաղորդեց: Միւս
կողմէ հետագրով պատասխանեց Սահակ
սրբազանի, մաղթելով որ արժանաւոր ընտ-
րութիւն մը կատարուի Կիւիկիայի կաթոլիկո-
սութեան համար:

«Երէկ, ծանուցանելով Կիւիկիայի կաթոլիկո-
սական ընտրութեան համար Առանայի մէջ
գումարուած ընտրական ժողովին առաջին
ներառ (չաքաթ, 20 հոկտ.) աւելցուցած էինք
թէ յաջորդ օրը, կիրակի, կատարուած ըլլաւ
է վեց անուն ցանկին պատրաստութիւնը, ո-
րուն արդիւնքը հաղորդող հետագրին կը սպա-
սուէր ժամէ ժամ:

«Արդ երէկ իրիկուն, ուշ ժամանակ, հասաւ
այդ հետագիրը, որ կը հաղորդէ վեց բարձրա-
տեման եկեղեցականներուն անունները, որ ա-
ւաւորի:

Մագաքիս արքեպիսկոպոս Օրմանեան (պա-
տրիարք Կ. Պոլսոյ).

Սահակ եպիսկ. Խապան (լուսարարպետ
Երուսաղէմի).

Դեռոյ եպիսկ. Երէցեան (պատ. փոխանորդ
Երուսաղէմի ի Կ. Պոլսոյ).

Վահրամ եպիսկ. Մանուկ (դէպ-ատենապետ
Կրօն. ժողովոյ).

Հմայեակ եպիսկ. Դիմաքեան (քաղաքի Բե-
րայի).

Դրիգորիս արքեպիսկ. Յովնանէսեան (դէպ-
ատենապետ Կրօն. ժողովոյ).

Ծանկին գլուխը կը գտնուի լուսարարպետ
Խապանեան օրագրան՝ որ 54 ընտրականներուն
51-ին քուէն ստացեր է:

«Ս. Պատրիարքը սոյն վեցանուն ցանկը ան-
միջապէս թագրերով մը հաղորդեց Բ. Դրան
եւ մի եւ նոյն ատեն հետագրով պատասխա-
նեց Սահակ սրբազանի՝ ծանուցանելով թէ
ցանկի մասին հարկ եղածը պիտի տնօրէնուի
հետեւեալ հարկ կրող. սպասել Ազգ. Կեդր.
Վարչութեան վերջին հրահանգին:

«Ընտրողական ժողովը, ինչպէս յայտնի է
թէ չաքաթ եւ թէ կիրակի յաջորդաբար գու-
մարուած է Առանայի մայր եկեղեցւոյ մէջ
եկեղեցական եւ աշխարհական 40 պատգամա-
ւորներու ներկայութեամբ՝ որոնցմէ 14-ը կըր-
կին ձայն ունենալով՝ 54 ձայնի ներկայու-
թիւնը ճշդուեր է:

«Պատգամաւորներուն, պատգամաւորներուն
հանգամանքը ճշդելէ ետեւ, հանդիսաւոր բա-
րեմաղթութիւններ ըրեր է վեհ. սուլթանին
արեւչաւորութեան համար եւ ատենը բացուած
հոգեկներ է: Բայց ժողովականները յոռնկայ
ձայնակցեր են եղած բարեմաղթութեանը:

«Գլուխակալ վեհ. Պատրիարքի փառա-
ւոր բարեմաղթութեանը ներկայ գտնուելէ
ետեւ, ընտրական գործողութեանը ձեռնար-
կուած պահունք մնկեր է:

«Ապա եկեղեցական հարց չարականներ եր-
գեր են, ուրկէ վերջ, Սահակ եպիսկոպոսի
բացման ճառով մը, բացառութիւն է գումարման
նպատակը եւ Կիւիկիայի աթոռին արժանաւոր
կաթոլիկոս մը ընտրելու պէտքը: Պատգամա-
ւորաց հաղորդմանը եւ իրենց ստանձնած

փոխանորդութիւնը ճշդուելէ յետոյ, Սահակ
եպիսկոպոս եկեղեցական եւ աշխարհական
պատգամաւորներուն հաղորդեր է ընդհանուր
ընտրելի եպիսկոպոսաց ցուցակը որուն մէջէն,
գաղտնի ընտրութեամբ առաւելագոյն թուէ
ստացող վեց ընտրելիներու անունները որո-
շուելով, հետագրաւ հաղորդուեցան պատրիար-
քաւորն:

«Երբ ընտրելիաց վեցանուն ցանկը վերա-
դարձուի պատրիարքաւորն, պիտի հաղորդուի
Առանայ Սահակ եպիսկոպոսի, որպէս զի ընտ-
րողական ժողովը գումարուելով կատարուի
վերջեական ընտրութիւնը: Մինչեւ չաքաթու
վերջը Կիւիկիայի աթոռը պիտի ունենայ իր կա-
թոլիկոսը:

«Ինչպէս յայտնի է, կուսակալութեան Մէջ-
թուպի պէլը, կայսր. կառավարութեան կողմէ
ներկայ գտնուելով սոյն գումարման, վեց ա-
ռաւելագոյն թուէ անգաղ եկեղեցականներու
անունները իր կողմէ հետագրեր է Բ. Դրան:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Բոստոն, նոյեմբերի 14-ին

Ամերիկայի նոր, նախագահը անվախ մարդ
է. գոնէ այնպէս ցոյց կուտան իր գործերը:
Դեռ երկար ժամանակ չէ իր պաշտօնի գլուխ
անցնելը, սակայն մի քանի անդրադարձակ պաշ-
տօնեաներ արտաքին իրենց տեղերէն, յաջո-
ղեցաւ պաշտօնեաներու քննութեան մոտցուած
օրէնքները յարգել առաւ: Նախագահը իր այս
գործերուն միջոցին երբեք հաշտի առած չէ
կուսակցական շահը. վերջուած պաշտօնեանե-
րու մէջ կան զգալիկ հանրապետականներ,
մարդիկ, որ մեծ թուով քուէներու կիշին:
Կան թերթեր որ կը մտածեն, թէ եթէ նախա-
գահը այս անպաշտ ընթացքը շարունակէ,
1904-ի ընտրութեան միջոցին իր չէմ պիտի
գտնէ իր հին բարեկամները, սակայն կերեւի
թէ Ռուզվելթ այդ կարգի հաշիւներով չէ, որ
կը կառավարուի:

Օրերս մասնաւոր եւ հոտարակութիւնը շատ
կարեւորութիւն տուին միջադէպի մը, որ
Միսիսիպի Նահանգացի ամենէն բարձր ու կնճռո-
մէկ խնդիրը անգամ մ'ալ հրապարակ հանց:
Նախագահ Ռուզվելթ ընթերցի հրապարակ
է հանրապետութեան սեւեռութեամբ Պալատը Ուաշինկ-
թոն Հարաւի թերթերը ահագին աղմուկ հա-
նցին նախագահին այդ գործի առթիւ. ըսին հին
գերեզմաններու որդիքը, թէ այդ կանխաձեռ-
նութեամբ նախադիմք մէ հարաւայիններուն ուղ-
ղութիւնը:

Պալատը Ուաշինկթըն շատ ուշագրաւ մարդ
մէ: Անհայր, անմայր սեւ երեխայ մը, ժամա-
նակին բարեօրէն մարդոց ձեռքով կրթուած:
Գերեզմանը ազատագրութեան աղբիւր այդ մար-
դը իր մտքի ու մարմնի ըլլող ուժերով կը
աշխարհ իր սեւեռութեամբ ցեղակիցները բարձրաց-
նել: Պալատը Ուաշինկթըն հաստատած է թու-
քածի հոգեկալուր օւսումնարան-արտաւար-
նոցը, որ սեւերու համար կրկնապէս պարգե-
ւած եղած է: Ուաշինկթըն կազմակերպող առ-
դանքը, անձնուէր եւսնող իրենց աղքատու-
թիւնը տարածած են ամբողջ հարաւի սեւե-
րու վրա: Այսօր կան հազարաւոր սեւեր, որ
իրենց կրթութիւնը, զիրքը եւ սպորտի մի-
ջոցները այդ ամբողջուն կը պարծան:

Ամերիկայի շատ մը գործեր կրնան, թէ գե-
րեւորեալ պատերազմէն վերջը սեւերու նիւթա-
կան վիճակը օւրի խեղճ էր, քան պատերազ-
մէն առաջ: Դեռեւորներ գտնէ տեղերէ շատերուն
համար աղքատ անհրաժեշտ պէտքերէն զեր-
կուած չէին, իսկ երբ Լիբըրթի յայտարարու-
թեամբ միջոցաւոր սեւեր ազատ հոգեկալու-
ցան, նոյն թուով անհող, անճարակ մարդիկ
աւելցան: Հարաւի հարստութիւնը ճերմակնե-
րու ձեռքն էր, սեւերու նիւթական գերու-
թիւնը շարունակուեցաւ: Հաստատուած իր-
աւութիւն մէ, կրնան, թէ Ամերիկայի խափշիկ-
ները զուրկ են կովկասեան ցեղին յառապիւ-
մական ձգտումէն, բարձրանալու տնայնաւոր
Մինչեւ հիմա կան սեւերու ահագին խումբեր
հարաւի սաք արեւուն տակ, որ համակերպու-
թեան, ծուլութեան մարմնաւորելը կը ներկա-
յացնեն: Մարդիկ որ գերեզմանով մարդկը վեր-
նային յետոյ՝ չեն ուզեր ոչ մշակել, ոչ սերմա-
նել՝ ձմերուկ մը իրենց կրկնակութեան մտա-
տիպարն է: Վերջին աստիճան տղէտ ու նա-
խապաշարակ, կապրեն, ինչպէս իրենց Աֆրի-
կայի նախահայրերը, կրնան եւ լեզուի անու-
նական փոփոխութիւնը միայն կրած ըլլալով:

Սեւերու նիւթական եւ մտաւոր խղճալի
կացութիւնը պատերազմէն վերջ ամերիկացի
մարդասէրներու ուշագրութիւնը գրաւեր է.
ընկերաբաններ եւ քաղաքագէտներ այն մի-

թոններով տղէտ քաղաքացիներու գոյութիւնը
սպառնալից վտանգ մը համար են Միացեալ
Նահանգացի համար: Ազնիւ մարդիկ փութա-
ցեր են օգնութեան, զլիսաւորաբար հիւսիս-
ային նահանգներէն հանգանակուած դրամով
բացեր են դպրոցներ, արհեստանոցներ եւ այլն:
Պալատը Ուաշինկթըն առաջին սեւեռութեան է-
որ այդ շարժումին ղեկավարը կը դառնայ. ամե-
րիկացիք լաւ ըմբռնել են, թէ ցեղին վերա-
բերող մարդ մը միայն կրնայ իր ցեղին բարձ-
րացման դժուարին գործը կատարել: Պալատը
Ուաշինկթընը նիւթական նպատար հիւսիս-
նահանգներու մարդասէրներէն կուգայ: Նպատա-
րուողներու զլիսաւորները միադաւաններ են,
ամենէն ազատամիտ քրիստոնեաները, որոնք
ուրիշ դպրոցներ ալ ունեն հարաւի մէջ սեւե-
րու համար: Թիւրքոյ մէջ ամերիկացի մի-
սիոնարներու մեծ ջանքն է զլիսաւոր դերակա-
տարը լինել, ընկի տարրը միայն միսիոնարի
իշխանութեան տակ պահել: Հոս դրութիւնը
տարբեր է, Պալատը Ուաշինկթըն ու եւ է ճե-
մակէ աւելի լաւ կը հասկնայ իր ցեղին ընդու-
նակութիւնները, պէտքը, հետեւաբար ամենէն
լաւ կրնայ մարդասիրական գործին ղեկավարը
դառնալ:

Ան ով է Պալատը Ուաշինկթոն, որին հիւ-
րասիրութեամբ պատուեց հանրապետութեան
նախագահը, դժգոհութիւն պատճառելով հա-
րաւայիններուն:

Արմէն

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԲԵՐ

«Temps» լրագրին հաղորդում են, թէ
Աւստրիայի գնահատան սլաւոնական քաղաքնե-
րում մօտ օրերումս տեղի ունեցան մեծ ցոյ-
ցիկ յօդու չեխական, բաւարական եւ սլո-
վէնական համալսարանների բացման Բրիւ-
նոս, Լայպպուս եւ Լիվուս: Այդ ցոյցերից
ամենանշանաւորն այն էր, որ տեղի ունեցաւ
Պրագայում: Յոյրին մասնակցութեամբ էին 2000-ից
աւելի մարդիկ, որոնց մէջ էին եւ մի քանի
պատգամաւորներ: Երիտասարդ չեխերի պա-
րագայում Հէրցոգ ճառ արտասանեց, որի մէջ
ապացուցանում էր, թէ անհրաժեշտ է բաւալ
Աւստրիայում սլաւոնական նոր համալսարան-
ներ, որպէս զի սլաւոնական երիտասարդու-
թեան գիտակցութեան մէջ ամբողջով ազ-
գային գաղափարը եւ հրիտասարդութիւնը
պատգամաւոր զիտութեամբ առաջիկայ մաքա-
ման համար գերմանական հոտանքի դէմ: Մի
այլ երիտասարդ-չեխ, Գորիցա, ասաց, ի միջի
այլոց. «Գերմանական համալսարանները ցեղա-
կան առեւտրութեան տարածող սերմնարաններ
են: Պրոֆէսոր Մոսզէն, հէնց այն մարդը, որ
խորհուրդ էր տալիս գերմանացիներին ջարդել
չեխերի գլուխները, Գերմանիայի փառքն ու
պարծանքն է... Գերմանական քաղաքակա-
նութիւնը եւ բիւրօկրատիան կրում են իրանց
վրա գերմանական համալսարանների անջնջելի
կնիքը եւ այս հանգամանքը պէտք է ծառայէ
մեզ համար ամենազլիսաւոր շարժանքներից
մէկը աշխատելու բանալ սլաւոնական համալ-
սարաններ, որոնք կը տարածեն իսկական քա-
ղաքակրթութեան՝ մարդասիրութեան, ազա-
տութեան, իրաւունքի, արդարութեան եւ հա-
մեղութեան սկզբունքները:

«Politische Correspondenz» լրագիրը հա-
ղորդում է հետեւեալ մանրամասնութիւնները
այն բանակցութիւնների մասին, որոնք տեղի
ունէին պետութիւնների մէջ: Կրէտէի ապա-
գայի վերաբերմամբ: Գերագոյն կոմիտարը
ցանկութեան յայտնեց, որ գնահատան հարցեր
որոնք վերաբերում են կղզու վարչութեան,
կարգաւորվին պետութիւնների կողմից: Այդ
հարցերի թուումն են, Կրէտէի դրոշակի ճա-
նաչումը, կրէտացիների հովանաւորութիւնը
արտասանմանում, կրէտացիների անցագրերի
օրինաւոր ճանաչումը, կրէտացիների դու-
թիւնը Թիւրքիայում: Կրէտէի յարաբերու-
թիւնների կանոնաւորումը պետութիւնների
հետ, փառանքի հարցը Կրէտէի ամբարում եւ
գերագոյն կոմիտարի հետանալու հարցը Կրէ-
տէից, առանց պաշտօնական թոյլտուութիւն
ստանալու: Այս կէտերից մի քանիսը արդէն
վճարված են այն կոնֆէրենցիանում, որ տեղի
ունեցաւ Հառում եւ օրին մասնակցութեամբ էին
առաւելան, Ֆրանսիական, բրիտանական եւ
իտալական ղեկավարները: Մնացած կէտերի
վերաբերմամբ պէտք է խորհրդակցութիւն
տեղի ունենայ նոյն պետութիւնների Կ. Պոլսի
դեսպանների մէջ: Հաւանական է, որ մնացած
հարցերն եւս այնպիսի վճիռ կը ստանան,
որպիսին ցանկալի է Կրէտէի ազգային ժողո-
վին:

—Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են, որ
երբ Ֆրանսիական ղեկավար Կոնստանտին Կ
Պոլսի, Սիրիէի կայարանում նրան դիմաւոր-
եցին՝ սուլթանի արարողակալ Հայր-բէյ,
Ֆրանսիական ղեկավարութեան անդամները,
պապական ղեկավար Բոնէտտի, հայ-կաթոլիկ-
ների պատրիարք Էմմանուէլեան իր օվիտայով
եւ կաթոլիկ միաբանութիւնների ներկայացու-
ցիչները Թիւրքիայում:

—«Arménie» լրագիրը ասում է, որ Ֆրան-
սիական մի քանի լրագիրներ շարունակում

են յարձակվել Դէլկասէի վրա այն բանի
համար, որ նա ցոյց տուեց թուրքներին
Թիւրքիայի վերաբերմամբ: Սակայն, Ֆրան-
սիական արտաքին գործերի մինիստրի հա-
մակրութիւնը գէշի Թիւրքիայի քրիստո-
նեաների ծանր գրութիւնը չառ լաւ յայտ-
նի է, եւ այդ պատճառով թէ Դէլկասէի
եւ թէ նրա դաշնակից Ռուսաստանի զգուշու-
թիւնը այդ հարցում չէ կարելի բողոքարկել նը-
րանց նեղ շահաւորական ձգտումներով: Ան-
հիմն է կարծել, ասում է լրագիրը, որ Ռու-
սաց արտաքին գործերի մինիստրը, ներշնչված
իր Միտիթայի բարձր մարդասիրական զգաց-
մունքներով, չէ ցանկանում, իր արժանաւոր
դաշնակից Ֆրանսիայի հետ, թեթեւացնել
թիւրքական քրիստոնեաների դրութիւնը: Եթէ
Ֆրանսիական նաւատորմի ծովային ցոյցը Եգե-
յան ծովում թիւրքաց քրիստոնեաների համար
ցանկալի հետեւանքներ չունեցաւ, դրա պատ-
ճառը, երեւի, այն լուրջ խոչնդաններն էին,
որոնք երեւան եկան, սուլթանի հաւատարմ
բարեկամների կողմից, որոնք Թիւրքիայի ըե-
ֆորմները վստահաւոր են համարում իրանց
շահաւոր նպատակների համար:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱՅԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

29 նոյեմբերի

ԲԵՐԼԻՆ. Լրագիրները շարունակում են ըղ-
բաղվել «Вѣстникъ Финансовъ»-ի յօդուածով:
Համբուրգի «General Anzeiger» լրագիրը յօդուածի
հետ միասին եւ կատարեալապէս համակարծիք
է ռուսական տեսակէտին, չը վախենալով ար-
տասանման գործակալի անուն վատասկեցուց:
Մասնացոյց անելով Աւստրիայում եւ Իտա-
լիայում տեղի ունեցող շարժման վրա, լրագիրը
բացականչում է. «Մեր մաքաւ-սակալային ան-
մասնութիւններով մենք զոյգու ենք մեր դաշնա-
կիցներին Ռուսաստանի մաքաւ-քաղաքական
գիրքը, եւ զեռ երեւակայում ենք, որ հերո-
սական գործ ենք կատարում»: «Berliner Zei-
tung» գտնում է, որ ասանց փոխադարձաբար
պակասեցնելու ռաքտահարկերը մեր մեծ բա-
րեացականութիւնը մաքալին պատերազմին
հաւասարադր կը լինի Ֆերմանիայի համար:
Լրագիրը հարցնում է ինքն իրան. «Մի-
թէ գերմանական, կառավարութիւնը ռուսաց
պետականներին եւ Աւստրիայի շահերին՝
անտեսապէս մօտենալու Ռուսաստանին կը
աղատախանէ այն փառն խաղերով, թէ
Ֆերմանիան տէր է իր տան մէջ: Միթէ նա չի
հասկնայ, որ կարող ենք կորցնել ռուսական
չուկան եւ անթիւ Դանսին ունենալ ռուս-
գերմանական մաքալին ընդհարումից: «Berli-
ner Börsen Couriers» վախենում է, որ գեր-
մանական կառավարութիւնը ականջ չի դնի
Վիտտէի լուրջ խօսքին, թէպէտեւ դիւրու-
թեամբ է նայում այն բանին, որ Ռուսաստա-
նը կարող է անցնել զէպի ինքնավարական
սակագիրը: Դա թոյլատրելի է ազարիանե-
րին, բայց ոչ թէ կառավարութեանը: «Zeits»
լրագիրը ասում է հաղորդագրութեան տողումէ-
ջերում կարգում է Ռուսաստանի պատրաս-
տակամութիւնը էական լինումն ունի գեր-
մանական ներածման, եթէ գերմանական հա-
ցադարձակների մաքաւարկերը կը կանոնաւոր-
վեն ի նպատակ ռուսական արտահանութեան:
«Breslauer Morgenzeitung» չէ գործնում այն
բանի վրա, որ Վիտտէի հակառակ կոմս Բրե-
լովի, գերմանական նոր տարբիք բողոքողին
անպէտք է համարում անտեսալիկ դաշնա-
գրի կապը: համար, սրբնեւեռ ինքն գեր-
մանական կառավարութիւնը բնորոշեց այդ
տարբիքը, որպէս գեղեցիկ գէնք կուի համար,
իսկ ի իրաւէր շատ ճիշդ նկատեց դրա մէջ ար-
գելող անձնաբանակ քաղաքականութեան ար-
տայալութիւն ի հանոյ մի բուռն ապրուա-
կան մեծ կայունատեղերի: «Kölnner Tage-
blatt» լրագիրը յաւակնութեամբ պատում է,
որ չէ կարելի կասկածել, որ խաղաղ վախճան
կունենայ անտեսալիկ վեճը Ռուսաստանի եւ
Գերմանիայի միջեւ, որովհետեւ գերմանական
կառավարութիւնը նոր նախագծի մէջ ընդուն-
ված ակագիրը բարձր չի գնայ, իսկ այդ ակա-
գիրների վերաբերմամբ ինքն, ի հարկէ, ար-
դէն համաձայնութիւն է կայացրել ռուսաց
արտաքին գործերի մինիստրութեան հետ:
Ազարային ուրիշ լրագիրները bonne mine &
mauvais jeu են անում եւ ախտաւոր են
ռուսաց ֆինանսների մինիստրի խօսքերը բա-
ցատրել պատերազմական քաղաքականութիւ-
նից հրաժարվելու մաքալը: Բայց այդպիսի
եթ ընդունում են, որ ռուսական հաղորդա-
գրութիւնը մեծ օգնութիւն է հասցնում գեր-
մանական մաքալին նորագոյն քաղաքակա-

Электротипография Груз. Издат. Т-ва. В.-Ванская ул.